

19395

ԲԱԴՐԱՑ ԱԶԳՈԶԵՄՆԵՑ

ՀՅՈՒՅՔ ԽՈՅԱԿՐ ԵՇ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՁԻՆՅԻ

891. 99

4-53

11.02.2013

19395

ԱԶՔԵՐԸ ԽՈՍՀԻՄ ԵՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ԶՐՈՅՑ

I

— Ե՞յ, շտապեցէք, լոյսը բացուեց, արկը ծագեց, կանչեց Տրդատ թագաւորը և ծափ զարկեց:

Նրա ձայնի վրայ ներս թափուեցան
ծառաներ, իշխաններ ու ողջոյնի նշան տա-
լով ասացին.

—Ամեն բան պատրաստ է, տէր թագաւոր, և քո հրամանին միայն սպասում ենք:

Այդ ժամանակ ներս մտաւ թագաւորի քոյրը՝ Խոսրովիդուխտը, որին նկատելով Տըրատը ուրախացած դիմաւորեց նրան:

— ԱՌ... քոյրիկս, դու արդէն խիզախի
նման պատրաստուելնս առանց վտանգներին
ուշ գարձնելու։ Իմացիր, որ մեր այս օրուայ
որսը լինելու է դէպի Մասիսի անդուդները,
ուր բանտարկուած է մեր նախահայր Ար-
տաւազդ թագաւորը։ Այդ տեղերը խիստ
վտանգաւոր են և ահռելի։ Վարազներն ու
բորենիները չեն խնայում պատահած մար-

դուն և նրա վորոտիքն են դուրս թափում:

—Մի վախեցնիր ինձ զուր արհաւիրքներով, ես ամեն բան ի նկատի եմ առել և ահա պատրաստ եմ հետեւու քեզ:

—Ապրիս, քոյրիկս, մենք իսկոյն կը շարժուենք, ասաց Տրդատը և հրաման տուեց հնչեցնելու փողերը:

Երբ Տրդատը Խոսրովիդխտի հետ դուրս գնաց պալատից, այստեղ արդէն ամեն ինչ պատրաստ էր ու կազմ: Տրդատի ձեռքի մի նշանից յետոյ առաջ անցան մի խումբ սուսերաւոր զինուորներ, մի խումբ տէգաւորներ, աղեղնաւորներ ու վահանաւորներ իսկ վերջը բազէների և որսկան շների մի ստուար բազմութիւն:

Այդ օրուայ որսը շատ հետաքրքիր էր լինելու, որին նպաստում էր և բնութեան հրաշափառութիւնը:

—Դէհ, քոյրիկս, թոփի նժոյգիդ վրայ, որ մենք էլ հետեւնք քեզ, ասաց Տրդատը դիմելով քրոջը և հենց որ Խոսրովիդուխտը ժամադէմ ուղեցաւ առաջ անցնել, այդ միջոցին հեռուից մի խումբ ձիաւորներ երեւացին, որոնք դէպի պալատ էին ընթանում:

Տրդատը իւր սրատես աչքերը դէպի այդ խումբը դարձնելով մուայլուեց ու ինքն իրեն մըմոաց.

—Հոռոմոց կայսրից պատգամաւորներ... ի՞նչէ նշանակում այդ:

Խումբը մօտեցաւ և նրանցից մէկը ցած թռչելով ձիից, խոնարհ ողջոյն տուեց թագաւորին և մեկնելով դէպի նանամակը, ասաց:

—Ողջոյն Հայոց մեծ թագաւոր Տրդատին հոռոմոց Դիոկղէտիանոս կայսրից:

Տրդատը կարդաց նամակը և նրա դէմքը աւելի պարզուեց: Ապա դիմելով շուրջը կանգնողներին ասաց:

—Գիտէք, փախստական կոյսեր են հասել մեր երկրը և ապաւինել այստեղ, ողջոնց մասին ինդրում է Դիօկղէտիանոս կայսրը բռնել և իւր ձեռքը հասցնել: Աստուածների օգնութիւնով ես կը գտնեմ այդ կոյսերին և կը կատարեմ կոյսեր կամքը ասաց նա, դիմելով պատգամաւորներին, ապա դառնալով իւրայիններին հրամայեց.

—Պատուել մեր պատգամաւորներին, մինչև մեր վերադարձը: Տրդատի նշանի վրայ Խոսրովիդսխտը թռաւ դէպի իւր նժոյգը և ամենքն էլ մի վայրկենում իրենց նժոյգները հեծնելով սրարշաւ առաջ անցան դէպի Մասիսի վիճերը...

Եղանակներում ըստ Առաջ պահանջում

II

Սիրուն էր Տրդատը, գէմքը գեղեցիկ,
պայծառ ու զուարթ:

Հոռոմոց աշխարհը նա դղբեցրել էր
իւր փառքով, իւր անօրինակ ուժով: Նա էր,
որ այնտեղ՝ Հոռոմայ կրկէսում վայրենի ցուլի
եղջիւրներից բռնելով՝ զուրս պոկեց նրանց
ու նրա վիզը սլորելով տեղն ու տեղը սպա-
նեց նրան. Նա էր, որ վազող կառքի անիւ-
ներից բռնելով գուրս հանեց իւր հակառակոր-
դին, երբ նա ուզում էր իրենից առաջ անց-
նել և վերջապէս նա էր, որ մէն միայնակ
Գոթաց Հոչէ թագաւորին տապալեց և գերի
բռնեց, միթէ այժմ Մասիս սարի վիճերը եր-
կիւղ պիտի ազգէին իրեն: Օ՛, ոչ: Այժմ նա
վերադառնում էր այդ վիճերից յաղթական
երգերով և բերում իրեն հետ անհամար որ-
սեր, որոնց նա դուրս էր հանել Մասիսի
ամենամուժ վիճերից:

Ուրախ ու զուարթ էր Տրդատը:

Եւ երբ ոտք դրեց իւր պալատ, նա դար-
ձաւ դէպի իւր նախարարը և ասաց.

— Իշխան, Օտա, հրամայիր, աստուած-
ներին՝ Արամազդին և Անահատին, անյաղթ
վահագնին առատ զոհաբերութիւն անել, որ
մեզ այսպիսի առատ որս տուեց:

— Կը կատարուի քո հրամանը, տէր
թագաւոր, բայց աստուածները մեզ ուրիշ
յաջողութիւն են տուել, ասաց Օտա իշխանը:

— Ի՞նչ, և թող անպակաս լինի մեզա-
նեց Արամազդի հովանաւորութիւնը:

— Դիովդէտիանոս կայսեր պահանջած
կոյսերի թագստի տեղը արդէն գտնուածէ:
— Եւ մուր են նրանք:

— Վաղարշապատի հնձաններից մէկում:
Նրանք երեսուն եօթ հոգի են, որոնք պաշ-
տում են իրենց մոլար Աստծուն երկու կոյ-
սերի ղեկավարութեամբ: Նրանցից մէկի ա-
նունը Հոփիսիմէ է, միւսինը Գայիանէ:

— Բերէք այդ երկու կոյսերին պալատ,
հրամայեց Տրդատը:

III

Հոփիսիմէ և Գայիանէ կոյսերին ներս
բերին պալատ:

Նրանք գեղեցիկ էին, աննման: Նրանց
աչքերից թափւում էր հեղութեան և խո-
նարհութեան կրակներ: Այդ աչքերի մէջ
թափնուած էին խոր, անյայտ թախիծ ու
վիշտը արտացոլում էր նրանց հայեացքներից:

Ու երբ Տրդատը նայեց Հոփիսիմէի
այդ աննման, գեղեցիկ գէմքին մի քանի

գայրկեան մնաց նա սառած, կարկամած:
Կիրը խօսեց նրա սրտի մէջ: — 0՝ ոչ, ես Հոփիսիմէին չեմ տալ
Դիոկէտիանոսին, եթէ աստուածների հուրը
թափուի գլխիս, վճռեց նա իւր մտքում:
— Հեռացէք այստեղից և թողէք այս-
տեղ միայն Հոփիսիմէին. ես ուզում եմ
խօսել նրա հետ, հրամայեց նա զինուրներին:
Ամենքը դուրս գնացին ու մէն միայ-
նակ մնացին Տրդատն ու Հոփիսիմէն:

— Լսիր ինձ, Հոփիսիմէ, դու գեղեցիկ ես և աննման: Դու յաղթեցիր անբար-
տաւան Տրդատին և ես վճռեցի քեզ ինձ
կին անել և ճոխ ու փարթամ կեանքով շըր-
ջապատել:

Հոփիսիմէն լուռէր ու թախիծով ու
երկիւզով լի աչքերով նայում էր թագա-
ւորին:

— Միթէ չես լսում, հայոց թագաւորն
է քեզ հետ խօսում:

— Ոչ, Տէր թագաւոր, ես ոչ ոքի կին
չեմ կարող դառնալ, որովհետև նուրիուած
եմ Աստծուն: Դիոկէտիանոս կայսրից փա-
խուստ տալով, քո երկրում ապաստանեցինք,
որպէս զի հանգիստ մեր Աստծուն պաշտենք:
— Բայց ձեր Աստուածը անզօրէ և հե-
ռու, լսիր ինձ և դու կը դառնաս բովանդակ

հայոց աշխարհի թագուհին, կանչեց սէդ
Տրդատը և ծունկ չոքեց Հոփիսիմէի առաջ:
— Դուք մի վրդովիր իմ հոգու խաղա-
ղութիւնը և թոյլ տուր հեռանալ ինձ այս-
տեղից, ասաց մէկմ ձայնով Հոփիսիմէն և
մի քայլ ետ գնաց:

Տրդատ թագաւորը ոտքի ցատքեց: Նրա
գէմքով բուռն ալիքներ անցան, աչքերը կա-
տաղութիւնով լցուեցան, ու բուռնցքները
սեղմելով մի քանի քայլ ետ ետ գնաց:

— Լսիր, յանդուկն աղջիկ, Արամագդին
վկայ եմ կանչում, որ ինձ հակառակող դեռ
ոչ ոք չէ եղել և դու առաջինն ես, որ յան-
դընում ես իմ գէմ զնալ, որի համար ամե-
նախիստ տանջանքների ես արժանի:

— Կարող ես տանջել, տէր թագաւոր,
բայց հոգիս ինձնից չես կարող խլել: Նա
անմահ է և անձեռնմխելի:

— Հոգիդ... բայց դու խելառ ես ու
ցնորուած: Վկայ եմ կանչում Աստղիկ դի-
ցուհուն, որ ձեր գեղեցկութիւնը տուած է
միայն այս աշխարհի համար և ոչ շար ո-
գիների, որոնք աներկոյթ աշխարհում պի-
տի լիանան, ասաց Տրդատը, յետ ու առաջ
անցաւ ու յանկարծ կատաղած գոռաց.

— Դու չես յանդզնի իմ գէմ զնալ.—
Ես կը խեղդեմ քեզ իմ մատներիս մէջ:

Ես պատրաստ եմ կը լ ամեն տան-
ջանք:

Արիւն կաթեցին Տրդատիաչքերից, երբ
լսեց նրա վճռական խօսքը ու նա կատա-
ղած վրայ վազեց դէպի Հռիփսիմէն, որպէս
զի բոռնցքի մի հարուածով գետին տամալի
նրան, բայց թոյլ կոյսը գերբնական զօրու-
թիւնով մի այնպիսի հարուած հասցեց Տըր-
դատին, որ նա ետ ու ետ գնալով իւր աժ-
դահայ մարմնով տապալուեց գետին:

Լեռան նման մարդը մի քանի վայրկեան
ընկած էր գետին ու ծանր ծանր տնքում
ու հառաջում էր:

Ու երբ նա ոտքի կանգնեց, կոյսը այլ
և չկար իւր պալատում. դէպից օգուտ քա-
ղելով, նա արդէն փախուստ էր տուել:


—Ե՞ր, հասէք, վազեցէք, բռնեցէք
անզգամներին... ուր որ գտնէք, կտոր կտոր
արէք նրանց ու յօշուեցէք մարմինները:
Հռիփսիմէին ամենածանը տանջանքներ
տուէք, խորունկ խորունկ խրեցէք սուրբն նրա
ակնակապիճների մէջ և նրա սիրուն աչքե-
րը հանելով ինձ բերէք, իսկ լեզուն ու քիթը
կտրելով գէն շպրտեցէք: Շուտ, հասէք, ապա
թէ ոչ երդւումեմ Արամազդով, որ ձեզ բո-
լորիդ մաս մաս կը կտրատեմ ու ձեր դիակ-
ները շներին կերակուր կանեմ, ասաց Տըր-

դատը ու կատաղած զինուորներին դէպի
անպաշտպան կոյսերը քշեց...

IV

Գիշերն արդէն անցնում էր բայց Տըր-
դատի աչքերին քունը մօտ չէր գալիս, Հենց
որ փակում էր աչքերը, կոյս Հռիփսիմէի
հեղ, թափիծով լի աչքերն էր առաջը գա-
լիս, Նա նայում էր այդ աչքերին, որոնցից
աստուածային երանութիւն էին արտացո-
լում ու մի տեսակ երկիւղած սարսուռ աղ-
դում նրան: Ա՛խ, նրա կապոյտ հրաշալի
աչքերը նրա մարմիննէր փշաքաղում ու
նրան ձգում անհուն վշտի և տանջանքի մէջ:
Խոր ու ծանր հևալով նա ծանր հառաջանք-
ներ էր արձակում և ուզում էր վեր թռչել,
վազել, խանգարել, որ իւր հրամանը չկա-
տարեն, որ կոյսերին ձեռք չտան, որ նը-
րանց մազին էլ չդիպչեն, բայց այդ ժամա-
նակ առաջ էր գալիս նրա անբարտաւան
եսը և նա լուռ տանջուելով ու հիւծուելով
սպասում էր իւր հրամանի հետեանքին:
Մութն արդէն անցել էր ու տեղի տուել ա-
ռաւօտուայ թոյլ լուսաւորութեան. հետ-
զհետէ արևելքը լուսաւորում էր, կապում,
կարմրում, ծիրանի գոյն սւանում և ապա
երևում արևի անդրանիկ ճառագայթների

Արև ավագանութիւն նորանութ ու դաւա



Հայոց ու ավագանութիւն նորանութ ու դաւա
աւագ ավագանութ մասու պատճեն հաւանակ
մաս մաս մաս մաս մաս մաս մաս մաս մաս

ցոլմունքները։ Այստեղ հրդէն էր սկսում,
երկնային լուսավառ հրդէն, որի ցոլմունքները ընկնելով հսկայ Մասիսի ճակատին,
նրան էլ բոցավառում էին և իւր զեհութեամբ դուրս ցցում ամպերից էլ բարձր...

Սիրուն էր Մասիսը, աննման ու հրաշալի։ Նրա յաւիտենական ծիւնով ծածկուած գագաթը կարծես վէճի էր բռնուել արեւելքի հետ ու երկնային բարձրութեան մէջ հուրհուրատին էր տալիս. արևելքինման կարմրում, ծիրանի գոյն ստանում, բոցավառվում ու ինչպէսմի կրակի փունջ դուրս ցըցւում մէն միայնակ երկնքի բարձրութեան մէջ։

Յաղ Յոդնած, ցաւատանջ արտով Տրդատ թագաւորը դժւրո նայեց իւր պալատից և յանկարծ, երբաչքովն ընկաւ հուրհուրատին տուող Մասիսը, նա քարացաւ ապշեց ու նրա սիրտը մի այնպիսի անհուն երանութեամբ լցուեց, որ հնկայի սիրտը փուլ եկաւ ու արտասնուքները կաթիլ առ կաթիլ ընկան նրա աչքերից։ Մասիսի այդ վեհ տեսքից նրա կամակոր սիրտը փափէնեց, գոռող եսը տեղի տուեց լուրջ խոհականութեան և յանկարծ յիշելով կօյսերին, դէպի նրանց արտած խխան հրամանը, — ինքն իրեն փռջմանեց, զիջաց ու ծանր ծանր հառաչեց։ Այդ իսկ վայրինին

Կա ուղեց երեսը շուռ տալ հսկայ Մասիսից
ու հրաման տալ իւր զինուորներին դադա-
րեցնել կոյսերին հալածելը, երբ հեռուից
նկատեց մի խումբ զինուորների, որոնք շտապ
դէպի իւր պալատն էին վազում:

Տրդատը կոկծից սիրտը բռնեց: Նա զգաց,
որ իւր զաջրելի հրամանը արդէն կապա-
րուած էր:

Խումբը մօտեցաւ և երբ իւր թագա-
ւորին տեսաւ, ուրախագին կանչեց:

— Կեցցէ մեր թագաւորը, ապրի Տրդատը:

Տրդատը լուռ էր, ապուշ կրթած, քա-
րացած:

Խմբի գլխաւորը առաջ անցաւ, մօտե-
ցաւ թագաւորին և սկսուեղի վրայ դրած
երկու արենկոլու աչքեր ներկայացրեց:

— Հոփփուիմէի աչքերն են, տէր թագաւոր,
հրամանդ կատարուած է, ասաց նա խոնար-
հութեամբ:

Տրդատը նայեց նրանց, մռնչաց, նրա
մռնչոցից սար ձոր արձագանք պուին, ապա
ծուլ եղաւ տեղից, մի թոփշք արաւ, սկու-
տեղը վերցրեց, արենկոլու աչքերին նայեց,
քրքջաց զիւ, երկար, վայրենի քրքջոցով ու
սկսուեղը դէն շպրտելով կանչեց:

— Ե՞յ, սուտէք ասում, Հոփփուիմէի աչ-
քերից Աստուածային կրակ էր բղիում իսկ

սրանցից միայն զարհուրանքի արտացոլում...
հեռու ինձանից, դուք խաբեբաներ էք, ես
զարհուրում եմ սրանցից, դողում, զարգու-
դում... ասաց, ծանը տնքաց, հառաչեց ու
պղտոր, խելացնոր աչքերով իւր շուրջը
նայեց:

Նա ոչինչչէր տեսնում, ոչինչչէր զգում,
թէ ինչ է կատարում շուրջը. շրջապատող-
ները միայն զգում էին, որ թագաւորը այդ
բոլէին տանջւում է, խիստ տանջւում՝ ու
ինչ որ ահաւոր բան կատարում նրա մէջ:
Պահ մի կանգ առան զինուորները ու թա-
գաւորին միմիթարելու համար ասացին:

— Մի երկմտի, տէր թագաւոր, հրա-
մանդ կատարուած է ու երկսուն եօթ կոյսեր
կտոր կտոր արուած հէնց այն վայրկեանին,
երբ նրանք իրանց մոլար Աստծուն աղօթք էին
մըմնջում: Մենք փորեցինք Հոփփուիմէի ակ-
նակապիճները խորունկ, շատ խորունկ և ահա
այդ նրա աչքերն են, որ բերել ենք քեզ
նուէր...

— Աչքերը ինձ նուէր էք բերել... ում
աչքերը, ի՞նչ աչքեր... ասաց Տրդատը մի
այնպիսի խղճուկ, ցաւալի ծագուկ, որ 222-
Զապատողների սիրաք կտոր եղաւ:

— Այս, աշքերը, ոդումած թագաւոր,

Ա. ՍՅԱՆԻԿՅԱՆ ԱՆՎԱՐ
ԱԿՈՆԻԱ, ԽԱՆԿԱՐ

Հոհիսիմէի արենկոլոլ աչքերը, պատասխանեց զինուռականը:

Տրդատի կուրծքը արագ բարձրանում էր ու իջնում և դէմքը մերթ կատաղի, սպառնական արտայայտութիւն ստանում ու մերթ խղճուկ, վախեցած հայեացք ընդունում.

Լոեցէք, յանկարծ կանչեց Տրդատը մի այնպիսի որոտալից ձայնով, որից քարկանեցին լսողները:—Շուտ պատրաստեցէք ձիս, իմ նժոյգ ձիս, զէնք ու զրահս տուէք, փշեցէք պատերազմական փողը, հնչեցրէք ուժգին, ուժգին, որ մեռեներն զարթնեն: Ես ուզում եմ գնալ, թռչել, սլանալ, սարձոր անցնել և հասնել ոգիների աշխարհը, այնտեղ՝ այն աներեսոյթ աշխարհում, ուր միայն մարդկանց հոգիներն են ապրում...

Ու խելագար թռիչքով նա հեծաւ իւր ձին ու քամու արագութեամբ սլացաւ առաջ...

V

Չէ վոզում նա, այլ թռչում է, քամուց արագ է անցնում, ոչ թռւի, ոչ թռմբ և ոչ չուր չէ հարցնում, մինչև որ ձին յոգնածութիւնից կանգ է առնում ու վերջին անգամ իւր տիրոջը նայելով երկու արցունք



թափում և յանկարծ շունչը փչելով տապալ-
ւում գետին:

Տրդատը հսկայական թռիչք է անում
մի կողմը և իւր պղտոր հայեացքը դարձնե-
լով դէպի հեռում, ուր մնացել էին իւր զի-
նակիցները կանչում.

—Ե՞յ, շտապեցէք այս կողմը, չ՞ք լը-
սում, ձեր թագաւորն է կանչում ձեզ:

Հեալով գալիս համնում են զինակից-
ները և շրջապատում թագաւորին:

—Ի՞նչ պատահեց, տէր թագաւոր, այս
վայրենի, անբնակ տեղ ի՞նչու եկաք, հարց-
նում էին նրանք:

Սակայն թագաւորը լուռ է և անզգայ:
Նա չէ խօսում. ձայն ծպուտ չէ հանում այլ
ապուշ կրթած, աչքերը դէպի օդային տա-
րածութիւնը դարձրած. նայում է մի կողմը:

Մութն ընկնում է. զինակիցները մի
կերպ ուտելիք են գտնում և առաջարկում
թագաւորին, բայց նա անխօս դէն է շպր-
տում և կրկին դէպի հեռուն զիտում: Եր-
բեմն միայն նա ամբողջ մարմնով ցնցւում
է, յանկարծ հեծկլառում ու ապա մի քիչ
հանգստանալով քթի տակ մըմբում. «Խո-
րունկ խորունկ փորեցին ու պայծառ աչ-
քերը հանեցին, ախ, այն աչքերից երկնա-
յին լոյսէր թափում, այնտեղից անմահու-

թիւն էր բուրում»: Մութը հետզհետէ թանձ-
րանում էր:

Մասիսի ճակատին սև ու մոայլ ամ-
պեր են ժողովւում ու այնտեղ սկսում է
փայլակի փայլը և որոտման խուլ դղրդիւնը:
Երկիւղած դէմքով Տրդատը այժմ նրան է
նայում ու յանկարծ դիմելով իւր մօտ կանգ-
նող զինակցին յուսակտուր ձայնով կան-
չում:

—Օ՛, ասա, այն ի՞նչ է այնտեղ փայ-
լակում ու փայլատակելիս ծանր որո-
տում: Ասա, ի՞նչու այստեղ ամեն բան տըն-
քում է, հեծեծում, հեծկլառում ու հառա-
չում և հառաչելիս ծանր տնքոց հանում և
լերդ ու թոքս դուրս թափում...

Ասա, ի՞նչու գայլերն այնպէս ոռնում
են, կլանձում աղիողորմ ու սարսուռ ազ-
գում սրտիս վրայ... Միթէ քար է կտրել
ձեր սիրտը և դարձել լեռ ապառաժ, որ դուք
էլ չէք ցնցւում, դուք էլ չէք հառաչում երբ
բովանդակ աշխարհն է տանջւում ու լալիս...

—Զէ, տէր թագաւոր, այն վեհապանծ
Մասիսն է որ հուրհուրատին է տալիս, մը-
ռնչում, գոռում, շանթեր արձակում... նա
է որ լալիս է ու հառաչում իսկ հառաչելիս
խոր տնքոց հանում, հեծեծում ու հեծկլ-
առում...

—Բայց ի՞նչու, ասա, ի՞նչու նա հառաշելիս այնպէս խոր է տնքում...»

—Օ՛... այնտեղ դեկըն են, որ խոր են տնքում, չար ոգիները երգ երգում...

—Հա, իրաւ է, այնտեղ դեկըն են տընքում, չար ոգիները երգ երգում: Ես տեսնում եմ նրանց. նրանք ինձ կանչում են, ձեռքով անում, հրհրում... օ... ես չեմ գալ, ես սարսափում եմ Մասեաց վիհերից, դողում, զարգանդում... ասաց թագաւորը, կուչեկաւ, գլուխը ձեռքերի մէջ առաւ ու սկըսեց դառնագին լալ ու հեծկլտալ...

—Վայ մեզ, մեր թագաւորը խելքից է եղել, ասացին շրջապատողները և իրենք էլ սկսեցին դառնագին լալ ու հեծկլտալ:

VI

Մոայլ ու սկ գիշեր էր. մինը այն գիշերներից երբ աշխարհս դադարում է ապրելուց ու նա էլ մարդու նման մեռնելով՝ անշարժութեան մատնւում: Այդ միջոցին ծառերը լուսում են, տերեները սուս անում, առուն դադարում է կարկաջելուց, ջրերը կանդ առնում, քամին լուսում է, շունչը պահում, իսկ գագաններն ու գիշատիչները մնում են սառած ու կարկամած և աշխարհս լցում է միայն սիրտ պատառող ահաւոր

լուս թիւնով... թանձր ամպերն են միայն, որ ծածկելով երկնքի պայծառ երեսը ան շշունջ ու լուս իջնում են ցած, ծառ ու թուփ պատում և ահաւոր լուսթեամբ գրկում երկրի հետ:

Ահա այդ մութ խաւարի մէջ, հեռուից լուսում է գանդաղ ոտնաձայներ: Այնտեղ՝ խութերի և թուփերի մէջ սալդկային մի ստուեր է անցնում, երբեմն երբեմն կանգ առնում, սրտից խոր թառանչ արձակում ու վերստին գգոյշ իւր քայլերն առաջ դնում:

Ո՞վ է այդ մարդը և մէջ գիշերին, անշարժ մեռելութեան մէջ ի՞նչ է շինում-յայտնի չէ, միայն թէ նա գլուխը կախ լուս ու մունջ, քայլ քայլի ետեից գնելով գնում է առաջ, միշտ առաջ, ինքն էլ չը հասկանալով դէպի հեր...

Ցանկարծ նա կանդ է առնում ու շրջփոթուած դէպի առաջ նայում: Այնտեղ՝ հեռուում, ծառերի ետե, առկայծող մի լոյս է նշմարում ու իւր պղտոր, անմիտ աչքերով դէպի նա նայում:

Ի՞նչ լոյս է այն և ի՞նչու խորին, անթափանցելի խաւարի մէջ այնպէս սիրուն է պլալում, մտածում է գիշերային այցելուն ու դանդաղ կրկին առաջ անցնում:

Մի քանի քայլ էլ առաջ է գնում ու

սարսափահար կանգ է առնում։ Նրա առաջքացւում է մի տեսարան, որպիսին երբէք տեսած չէր։ Այդ տեսարանը ցնցում է նրա ուղեղը և այնտեղ վերաբարում հին հին, բայց մռայլ պատկերներ։ Նա տեսնում է այնտեղ չորս-հինգ մարդ, որոնք ճրագի աղօտ լոյսի տակ ծունկ չոքած, բազկատարած ձեռքերով, աչքերը դէպի մռայլ երկինքը ուղղած ինչ որ մրմնջում էին... Հովիներ էին նրանք, որոնք լուռ աղօթում էին։

Գիշերային այցելուն պահ մի նայեց նրանց, ապա ծանր ծանր հառաչեց ու խելազար ոստիւն անելով առաջ անցաւ դէպի աղօթողները։

— Մեր թագաւորն է, կանչեցին հովիւները սարսափահար ու ոտքի կանգնեցին։

Տրդատը ձեռքով նշան արաւ ու ասաց։

— Մի վախենաք, մի սարսափէք ձեր թագաւորից, բայց ասացէք ինձ, ի՞նչ էիք անում ծունկ չոքած և ի՞նչու ձեր ձեռքերը բազկատարած էին ու աչքերը վեր ուղղած։

— Աղօթում էինք, աէր թագաւոր...
— Աղօթում... բայց ում, որ Աստծուն։

Հովիւները լուռ կացան, երկիւղից իւրար կծկուեցան և ոչինչ պատասխանեցին։

— Զէք լսում, ասացէք, ի՞նչու դուք վեր էիք նայում։ չէ որ մեր աստուածները

երկրումն են, մեղ մօտ, իսկ դուք վերևում ում էիք դիմում, ասաց Տրդատը, ծալապատիկ նստեց նրանց մօտ և ապա բռնելով ամենածեր հովուի ձեռքը աւելացրեց։ Դու ծեր ես և քո թագաւորին չես խաբիլ, ասա, մի վախենար, ում էիք աղօթում, Արամազդին թէ մի ուրիշ Աստծու։

— Ո չ, աէր թագաւոր, մեր Աստուածը մեծ է ու զօրաւոր։ Մենք պաշտում ենք այն Աստծուն, ով ստեղծել է երկինքն ու երկիրը։

— Բայց մի՞թէ Արամազդից էլ մեծ Աստուած կայ, հարցըց խոպոտ ձայնով Տրդատը և աչքերը վեր ուղղեց՝ այնտեղ ուր սողում էին մռայլ ու սև ամպերը և թախիծով պատում սրտերը։

— Մեր Աստուածը անմահ է ու զօրաւոր և բացի Նրանից չկայ ուրիշ Աստուած։ Մենք քրիստոնեաներ ենք, կանչեցին հովիւները ու նորից ծունկ չոքեցին աղօթելու։

Տրդատը ապուշ կրթած կրկին նայեց նրանց ու յանկարծ վեր թռչելով տեղից կանչեց։

— Հա, ձեր Աստուածը զօրաւոր է... բայց ուր է նա... նա, որի աչքերը խօսում էին, լալիս, արցունքներ թափում և այդ արցունքների հետ լուսոյ և յուսոյ կայծեր

սփռում սրտիս, մէջ... Ա՛խ, նա չ'կայ, չկայ,
ձեր մէջ էլ չկայ, կանչեց Տրդատը, խելա-
գարի զիւ քրքիջ արձակեց ու դարձեալ կո-
րաւ խորին խաւարի մէջ...

Տրդատը կրկին գնում էր առաջ, բայց
նրա մուայլ հոգու մէջ շարժւում էր մի ինչ որ
անհասկանալի յոյզ և նրան ձգում մի անյայտ,
կախարդական աշխարհ, որի ինչ լինելը դեռ
չէր կարողանում պատկերացնել իրեն:

Նա գնում էր առաջ դանդաղ, խոր
մտքերի մէջ ընկղմուած ու երբեմն կանգ
առնելով իւր պղտոր աչքերով նայում էր
վէր, այնտեղ, ուր ամպերն էին մուայլում և
ապա դժկամակութեամբ երեսը դարձնելով,
խոր հոգոց էր հանում և կրկին իւր ուղին
շարունակում:

Յանկարծ նա կանգ առաւ. զարհուրած
մի քանի քայլ ետ ետ գնաց ու ապուշ կը ը-
թած աչքերով իւր առաջ նայեց. Այնտեղ
կարծես ինչոր արիւնոտ դիակներ նկատեց,
որոնք ամպերի հետ միասին սողալով անցան
նրա աչքի առաջ և ուր որ կորան հեռւում:

Եւ այդ խօլական պատկերը աւելի
ցնցեց Տրդատի ուղեղը և նրա մտքի մէջ
վերարտադրեց իւր ձեռքով կատարած ո-
ճիրները. Այդ միջոցին Տրդատը ծունկ չո-
քեց ու ձեռքերը վեր ուղղելով կանչեց.



— Օ՛... զարհուրելի է, սոսկալի...

Այդ միջոցին ծառերը հառաչեցին, քամին սկսեց դօղանջել ու հեռւում շներն ու գաղանները օռնալ...

— Ես տանջւում եմ, հասիր ինձ, կանչեց Տրդատը մի այնպիսի աղիողորմ, սիրտ կտրատող ձայնով, որ բնութիւնը նորից մի վայրկեան լուռ կացաւ, քարացաւ, անշարժ մնաց:

Եւ ամենքը՝ մարդ թէ գաղան, ծառ թէ թուփ կարծես սպասում էին թէ ահա ուր որ է մի ինչոր գերբնական զօրութիւն պիտի գայ ու անցնի այդ ահաւոր լուռթեան մէջ, եւ Տրդատն էլ սպասում էր նրան, երբ նկատեց որ ծառերի մէջ մութ ամպերը հնատգնետէ պայծառացան, լուսաւորուեցան, ձևակերպուեցան և այնտեղ երեացին աչքերը...

Տրդատը նայում էր նրանց, նայում ու սպակում: Քրանքի խոշոր կաթիւները կայլակ առ կայլակ թափում էին նրա ճակատից: Նա պարզ կերպով տեսնում էր այնտեղ երկու աչքեր, որոնցից հեզութեան, անմահութեան և անսահման բերկրանք էր բուրում:

— Ո՞վ ես, ասա, գու ոգի ես երկնքի թէ մարմնացեալ դե. եկել ես ինձ փրկելու

թէ գեհենի կըակի մէջ այրելու, ասաց Տըրդատը ու սկսեց ծնկաչոք առաջ շարժուել:

Աչքերը ոչինչ պատասխանեցին. սակայն Տրդատը զգաց, որ այդ աչքերը խօսում են, մի ինչոր ասում և ուր որ կանչում:

— Օ՛... դու կանչում ես ինձ, ուր որ հրաւիրում, բայց ասա ով ես, ուր ես կանչում:

Այդ ժամանակ ամպերը աւելի խտացան, ձևակերպուեցան և արքայի առաջ երեկցաւ Հոփիսիմէ կոյսը իւր նազուք կազմուածքով ու աննման, հեզ ու ողորմած դէմքով. ճիշտ այնպէս ինչպէս կանգնած էր իւր պալատում երբ ինքը թաւալգլոր նրանից սէր էր ինդրում:

— Ա՛... աննման աղջիկ, ես տանջւում եմ, փրկիր ինձ, ցաւագար ձայնով կանչեց Տրդատը:

Ստուերը երերաց, շարժուեց առաջ ու ձեռքի նշանով կանչեց Տրդատին:

Տրդատը վեր կացաւ ու ծանր ծանր հնաւով յետևեց նրան:

Երբոր նրանք բաւական առաջ անցան, ստուերը կանգ առաւ վաղարշապատի հընձաններից մէկում և ձեռքով ցոյց տալով ասաց Տրդատին:

— Տես, արքայ, սրանք մեր յոշոտուած մարմիններն են, որ դեռ անթաղ են մնում: Մենք այստեղ աղօթում էինք, երբ քո զինուորները վրայ հասան ու վայրի գազանների նման պատառ պատառ արին մեզ, իսկ իմ աչքերը խորունկ, խորունկ փորեցին. բայց նայիր իմ աչքերին, ինչքան նըրանք վառ են ու պայծառ. աւելի վառ ու պայծառ, քան երբ դու ուղում էիր տանջել:

Տրդատը նայում էր նրանց ու խորկոկիծը ցնցում էր նրա ամբողջ մարմինը: Նրա սրտի մէջ այդ վայրկենին բացուել էր մի վիճ, որտեղից դուրս էր ժայթքում արիւն ու ժահը ու սոսկալի, անսասելի ցաւ պատճառում նրան: Այնտեղ կամաց կամաց զարթնում էր խիղճը և զուրս վանում այն ամենի գազանին, որին «Ես» են անուանում և որի շնորհիւ տարապարտուց անմեղ արիններ էին թափուելու...

— Օ՛, ես տանջւում եմ, սոսկում, փրկիր ինձ, նոր ց կանչեց արքան:

— Լոյն, տէր թագաւոր, և հաւատա այն Աստծուն, որը անմահ է, յաւիտենական, մեծ և զօրաւոր... նորից խօսեց ստուերը և նրաձայնը պինդ պինդ հնչեցին արքայի ական-

ջին և զարկւելով նրա սրտի լարերին, տակն ու վրայ արին նրա ջղերը, մարդկութեան գիտակշութիւնը, նրա հոգու ամբողջ աշխարհը...

— Օ՛, երկնային անմահ ոգի, վեհապանձ Մասիսը թող վկայ լինի, որ ես հաւատում եմ ձեր Աստծուն ձշմարիտ և անմահ Աստծուն: Ներիր ինձ, ներիր իմ յանցանքը:

— Թող Եհովա Աստուածը թողութիւն տայ քո մեղքերին:

— Ես հաւատում եմ ձեր Աստծուն, կրկին կրկնեց Տրդատը և արցունքները դուրս վիժեցին նրա աչքերից:

Այդ ժամանակ ստուերը ժպտաց անհուն երկնային ժպտառվ ու նա անշշուկ, անձայն մօտենալով Տրդատին, իւր անոյշ վարդագոյն շրթունքներով հպուեց նրա բորբոքուած այտերին և Տրդատը զգաց նրա անուշաբոյր համբոյրի կախարդիչ, հմայիչ զօրութիւնը...

Տրդատը դողում էր սառը, ահաւոր դողոցով ու զգում, որ մի ինչոր կախարդիչ զօրութիւն յեղաշրջում է նրա ամբողջ հոգեկան աշխարհը: և նրան ձգում անսահման երանութեան և հանգստութեան մէջ:

Ու երբ նա թեթևացած սրտով գլուխը

վեր բարձրացրեց, նկատեց, որ Հռիփսիմէն
այլևս չկար, մինչդեռ մոայլ ամպերը քաշ
ուել էին ուր որ, և երկնքից, ջինջ ու պայ-
ծառ երկնքից, իջնում էր ցողը, անապական
և վճիտ ցողը, որոնք ընկնելով հենց նրա
սրտի վրայ թեթեացնում էին նրա հոգու
տանջանքները...

Տըդատը նայում էր ու ցնծում. նա
նկատում էր, որ այդ միջոցին բացւում է¹
հայոց աշխարհի սիրուն, հրաշափառ արշա-
լոյմը...

Այդ արշալոյսը կեանքի և լուսոյ արշալոյսն էր, որ Տրդատի հոգու մէջ յեղաշը ջուելով լուծում էր այն խոր, անիմանալի գաղանիքը, որ վեր է ու անհասկանալի մարդկային գիտակցությունից...

Խաւարը՝ մտքի ու կեանքի, հեռանուլ
էր ևնրա տեղ թագաւորում պայծառ լոյսը...
Եւ Տրդասը արդէն զարթնում էր վերա-
ծնուած, լի երկնային ձիրքերով, որպէս զի-
նրա շնչով հիմք դրուի Միածնի իջման տա-
ճարը, հայութեան այդ միակ սրբավայրը...



«Ազգային գրադարան»



NL0327833

